

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 04-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝

Լ.Մուրադյանի
Դ.Սամսոնյանի
Մ.Քարտաշյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
ղեկավար՝

Փ.Կարապետյանի

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետ
Ոստիկանության գնդապետ

Ա.Այվազյանի

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Արմավիրի
մարզային գործակալության պետ՝

Ի.Սարգսյանի

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի զինվորական կոմիսար՝

Ա.Համբարձումյանի

ՀՀ Արմավիրի մարզի էջմիածնի զինվորական կոմիսար՝

Հ.Ազատյանի

Արմավիր ՋՕԸ -ի տնօրեն՝

Հ.Պետրոսյանի

Արաքս ՋՕԸ-ի տնօրեն

Ա.Գևորգյանի

Մերձափնյա ՋՕԸ-ի տնօրեն

Ա. Հայրապետյանի

Սև-Ջուր Ախթամար ՋՕԸ տնօրեն՝

Խ.Սարգսյանի

Մուսալեռ ՋՕԸ-ի տնօրեն

Գ.Խաչիկյանի

Ակնայիճ ՋՕԸ-ի տնօրեն

Ս.Աբգարյանի

Խոյ ՋՕԸ-ի տնօրեն

Ս.Սարգսյանի

Շենիկ ՋՕԸ-ի տնօրեն

Ս.Սարգսյանի

Վաղարշապատ ՋՕԸ-ի տնօրեն

Ս.Սեդրակյանի

Ջրառ ՓԲԸ տնօրեն

Է.Սարգսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Ա. Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

2. Գյուղատնտեսական համարարած հաշվառման աշխատանքների ընթացքը ՀՀ Արմավիրի մարզում

/Ա. Այվազյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

3. ՀՀ Արմավիրի մարզի սեփական եկամուտների հավաքագրման ու համայնքներում աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացը առ. 01.11.2014թ դրությամբ

/Վ. Մկրտչյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2014 թվականի ձմեռային զորակոչի կազմակերպմանն առընչվող խնդիրների մասին

/Ա. Համբարձումյան- ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի զինվորական կոմիսար

/Հ. Ազատյան - ՀՀ Արմավիրի մարզի էջմիածնի զինվորական կոմիսար/

5. ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի բնակիչ Մարինե Գրիգորյանի դիմումի հիման վրա Արգավանդ համայնքի ղեկավար Արշակ Աղաջանյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետի 25.09.2014թ. N 7/36-14-5068 գրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետարան ուղարկված 24.09.2014թ. N 7/36-14-5043 միջնորդագրի քննարկում:

/Յու. Մանվելյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ /

6. ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան համայնքի ղեկավար Գրիգոր Մկրտչյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետի 29.09.2014թ. N 7 /36-4-5147 գրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետարան ուղարկված միջնորդագրի քննարկում:

/Յու. Մանվելյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ /

7. Հայտարարություններ՝

Փ. Կարապետյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
ղեկավար

Ա. Այվազյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի
գյուղատնտեսության և
բնապահպանության վարչության պետ

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը մարզխորհրդի նիստի մասնակիցների հաստատմանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի նիստի օրակարգը:

**Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.10 –րդ կետի 13-րդ պարբերությամբ՝
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝
Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի նիստի օրակարգը:**

Մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը մարզպետ Ա. Ղահրամանյանը մարզխորհրդի նիստի մասնակիցներին ներկայացրեց ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային նորանշանակ վարչության պետ, ոստիկանության գնդապետ Արսեն Այվազյանին: Ա. Այվազյանը ողջունելով ներկաներին՝ մասնավորապես ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզում առավել փարածված հանցարեսակների և դրանց ուղղությունների, համայնքներում փարածված անասնագողությունների, բնակարանային, առևտրի կետերի, ՋՕԸ-ներին պարկանող փրասֆորմատորների գողությունների մասին: Ա. Այվազյանը նշեց, որ ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացվում են բոլոր համապատասխան միջոցառումները, ուժեղացվում են գիշերային հսկողությունները փարածված հանցարեսակների կանխարգելման ուղղությամբ: Ա. Այվազյանը ակնկալելով համայնքների ղեկավարների հետ համագործակցությունն ու գործունե աջակցությունը՝ համայնքներում ազգաբնակչության հետ փարվող աշխատանքներում, հավաստիացրեց, որ կարվի հնարավորինս մարզում հանցավորության դեմ պայքարի և կանխարգելմանն ուղղված միջոցառումների լիարժեք իրականացման համար, ինչպես նաև առաջարկեց իրականացնել հասարակական հսկողություն ոստիկանների վար աշխատանքի, վար վարքագծի և պահվածքի

նկատմամբ և անհրաժեշտության դեպքում արձագանքել համապատասխան հասցեականությամբ:

Մարզպետ Ա.Ղահրամանյանը կարևորելով Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը ,համոզմունք հայտնեց,որ այն իր դրական արդյունքները կրա և կնպաստի ժողովրդի բարեկեցությանը:

Օրակարգային երկրորդ հարցով ելույթ ունեցավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը՝ ներկայացնելով գյուղատնտեսական համափարած հաշվառման աշխատանքների ընթացքը ՀՀ Արմավիրի մարզում: Նա տեղեկացրեց,որ հիմք ընդունելով «Գյուղատնտեսության համափարած հաշվառման մասին» ՀՀ օրենքը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 25.04.2013թ. N 402-Ն որոշմամբ՝ 2014 թվականի հոկտեմբերի 6-31-ը Արմավիրի մարզում իրականացվել է գյուղատնտեսության հաշվառում 524 հաշվարարների միջոցով: Հաշվառման նպատակն է գյուղատնտեսության հետ առընչվող բոլոր տվյալների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության հավաքագրումը, մասնավորապես փաստացի առկա հողատարածությունների, անասնազխաքանակների և շինությունների վերաբերյալ: Գյուղատնտեսական համափարած հաշվառման աշխատանքները մարզում սկսվել են սահմանված ժամկետներում: Հաշվառիչների աշխատանքների կազմակերպումը իրականացվել է այդ նպատակով մարզում ստեղծված 10 հաշվառման տեղամասերի միջոցով՝ Բաղրամյանում-1, Արմավիրում-4, Էջմիածնում-5, իսկ աշխատանքների համակարգումը իրականացվել է մարզային հանձնաժողովի միջոցով՝ մարզպետի գլխավորությամբ: Ա.Այվազյանը նշեց,որ աշխատանքներն ավարտված են և կատարված աշխատանքները լուսաբանվել են զանգվածային լրատվամիջոցներով՝ հավելելով, որ աշխատանքների կատարման բարձր որակի մասին իր դրական գնահատականն է տվել նաև միջազգային փորձագետը: Նա տեղեկացրեց,որ այսուհետ կընթանա հաշվարարների կողմից իրականացված աշխատանքների ստուգման և ընդունման փուլը,իսկ տվյալների վերջնական ամփոփումը և հրապարակումը կիրականացվի 2016 թվականին:

Մարզպետ Ա.Ղահրամանյանը ամփոփելով և ի գիտություն ընդունելով Ա. Այվազյանի զեկուցումը, նշեց որ համայնքների ղեկավարները պետք է ռեալ տեղեկացված լինեն հաշվառման արդյունքներից ու ցուցանիշներից և անհրաժեշտ է,

որպեսզի դրանք հստակ ձևակերպվեն համապատասխան փաստաթղթերով, ինչպես նաև առաջարկեց մի քանի համայնքներում իրականացնել համեմատական ստուգումներ՝ կապված հաշվառիչների աշխատանքի հետ:

Մարզպետը մարզխորհրդի նիստի մասնակիցներին իրազեկման կարգով տեղեկացրեց նաև, որ մարզում կառուցվում է նոր ջրամբար շուրջ 70 մլն մ/խոր. փարողությամբ, որի շնորհիվ էականորեն կլուծվի ՀՀ Արմավիրի մարզի ջրօգտագործման և ոռոգման խնդիրները, ինչպես նաև առաջարկեց մարզի ԶՕԸ-ների փնտրեններին և համայնքների ղեկավարներին՝ աշխատել համագործակցված և միասնական՝ ազգաբնակչության առջև ծառայած խնդիրներին հնարավորինս լիարժեք լուծումներ փալու համար:

Օրակարգային երրորդ հարցի վերաբերյալ զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը՝ ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզի սեփական եկամուտների և աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացը առ 01.11.2014թ դրությամբ: Նա ընդհանուր կարգով նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների փաստացի մուտքերը նախատեսված 1 մլրդ 644 մլն 486 հազար դրամի դիմաց կազմել են 1 մլրդ 475 մլն 750 հազար դրամ, կատարողականը՝ 89,7 տոկոս:

Հավաքագրման մակարդակը 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 2.2 տոկոսով, շուրջ 7%-ով ավելացել են գույքահարկի և վարձակալական եկամուտների հավաքագրման ցուցանիշները: Նվազում է գրանցվել միայն հողի հարկի հավաքագրման մասով:

Ամփոփելով Վ.Մկրտչյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը, մարզպետն անդրադարձավ 60% -ից ցածր ցուցանիշներ ունեցող համայնքներին առանձին-առանձին, որոնք պարտավորվեցին մինչև ամսվա վերջը հավաքագրումների մակարդակը հասցնել մինչև 70%-ի: Մարզպետ Ա.Ղահրամանյանը անընդունելի համարելով հավաքագրման ցածր ցուցանիշները՝ **առաջարկեց համայնքների ղեկավարներին առավել պատասխանատվությամբ վերաբերվել սեփական եկամուտների հավաքագրման գործընթացին՝ ապահովելով համայնքի բյուջեով պլանավորված ցուցանիշների կատարումը:**

Օրակարգային չորրորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2014 թվականի ծմեռային զորակոչի կազմակերպմանն առնչող խնդիրների

մասին հանդես եկան ՀՀ Արմավիրի և Էջմիածնի փարածքային զինվորական կոմիսարները:

ՀՀ Արմավիրի փարածքային զինվորական կոմիսար Ա.Համբարձումյանը և Էջմիածնի փարածքային զինվորական Հ.Ազարյանը իրենց ելույթներում նշեցին, որ դեռևս սեպտեմբեր ամսից սկսվել են 2014 թվականի ծմեռային զորակոչի նախապատրաստական աշխատանքները և դրանք ընթանում են բնականոն հունով: Զինկոմները շնորհակալություն հայտնելով համայնքների ղեկավարներին և բոլոր շահագրգիռ կազմակերպություններին՝ իրենց լիազորությունների շրջանակներում զինվորական կոմիսարիատներին աջակցելու համար, հավաստացրեցին, որ կարվի ամեն ինչ 2014 թվականի ծմեռային զորակոչը կազմակերպված և որակով անցկացնելու համար/զեկույցները կցվում են/:

Օրակարգային հինգերորդ և վեցերորդ հարցերով հանդես եկավ մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Լիաննա Հարությունյանը: Հիմք ընդունելով ՀՀ քննչական վարչության պետի 25.09.2014 թվականի N 7/36-14-5068 և N7/36-4-5147 գրությունները Լ.Հարությունյանը ներկայացրեց Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի բնակիչ Մարինե Գրիգորյանի դիմումի հիման վրա Արգավանդ համայնքի ղեկավար Արշակ Աղաջանյանի, ապա նաև Նալբանդյան համայնքի ղեկավար Գրիգոր Մկրտչյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով Արմավիրի մարզպետարան ուղարկված միջնորդագրերը, որոնք վերաբերում են համապատասխան համայնքների ղեկավարների կողմից իրականացված գործառույթներին՝ կապված հողային հարաբերությունների և տեղեկատվության տրամադրման կարգի հետ:

Օրակարգային վերը նշված հարցերի արդյունքում նախ առաջարկվեց համայնքի սեփականություն հանդիսացող գույքը ինչպես վարձակալությամբ տրամադրելու, այնպես էլ վաճառելու հետ կապված մրցույթների և աճուրդների կազմակերպումն ու իրականացումը կատարել միայն ՀՀ հողային օրենսգրքով, ՀՀ քաղաքակալային սակարկությունների մասին>> ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի N286 որոշմամբ սահմանված կարգով: Անդրադառնալով ՀՀ Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի հիմնական դրույթներին առաջարկվեց համայնքների ղեկավարներին օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն փնտրող անձին տրամադրել հավաստի և ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաև գործառույթներ

իրականացնելիս խստագույնս կիրառել օրենսդրության պահանջները ՚բացառելով նմանարիպ երևույթները::

Օրակարգային հարցերի քննարկման ավարտից հետո հայտարարությամբ հանդես եկան ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ.Կարապետյանը և մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը:

Փ.Կարապետյանը իր հայտարարությամբ նշեց,որ անհրաժեշտ է կազմել և ավարտին հասցնել համայնքների զարգացման քառամյա ծրագրերի կազմման աշխատանքները և մինչև 15.12.2014 թվականը ներկայացնել մարզպետարան,ինչպես նաև առաջարկեց համայնքների ղեկավարներին 10-օրյա ժամկետում տեղեկավարվություն ներկայացնել համայնքներում իրականացվող անհատական բնակարանների կառուցման շինարարությունների ծավալների վերաբերյալ:

Ա. Այվազյանը իր հայտարարությամբ նշեց, որ մկնանման կրճողների դեմ իրականացվող միջոցառումների շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզին հատկացվել է 360կգ ցինկի ֆոսֆատի պարարտանյութ և դրանց ճիշտ օգտագործման համար համայնքներին կտրամադրվեն համապատասխան ուղեցույցներ և հրահանգներ՝ դրանցով առաջնորդվելու համար, որոնք համայնքների ղեկավարները կարող են ստանալ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունից:

Օրակարգային հարցերի ու հայտարարությունների համապատասխանաբար քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզխորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Արձ.՝ Մ.Առուշանյան